

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՍԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՍՆՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ. Վերոյիշեալ բացառութեանց չպատկանող անձանց համար երիտասարդութեան հասակում հասնում է այն ժամանակն, որ կարելի է անուանել զարթող սիրոյ ժամանակ: Ինչպէս բնութեան մէջ զարնան գալովն երևում է կեանք և շարժողութիւն, սոյնպէս և կեանքի վերոյիշեալ զարնանային եղանակի հասնելուն հետ երիտասարդի բնութեան մէջ զարթնում է բնական ձգտումն, իսկ նորա հոգու մէջ երևում է սիրոյ աւելի կամ պակաս գիտակցական անհրաժեշտութիւնն, որոնումն, նախազգացմունք, երևակայական յոյս — սոքա ի վերջոյ ստանում են կերպարանք հակամիտութեան առ որևէ անձնաւորութիւն իգական սեռի, երևում է սիրահարութեան զգացմունքն, որ յաճախ կարող է փոխել իւր առարկայն, մինչև որ վերջապէս որոնումից յետ կրգտնուի անձնաւորութիւնն, որոյ հետ կապուում է դաշն նախնշանադրութեամբ և ապա ամուսնութեամբ: Սեռերի փոխադարձ ձգտումն կամ սէրը հոգեբանական կողմից նկարագրելը, սորա երազներն ու անորոշ ցնորքները, գուարճութիւնքն ու տանջանքները, նորա զարգացումն նկարագրելն, որ երբեմն կրքի աստիճանին հասնում է — դա իսկապէս բանաստեղծի գործն է, թէև իսկական բանաստեղծը պէտք է նկարագրէ այդ առարկայի և բարոյական կողմը: Այստեղ մենք կ'իշխենք այն, որ ինքն ըստ ինքեան սէրը բոլոր իւր տրամադրութիւններով և բազմազան վիճակներով է միայն նախերգանք բարոյական յարաբերութեանց կնոջ և այր մարդու մէջ, մինչև որ նա չէ հասել զարգացման այն կէտին, ուր սիրողների փոխադարձ յարաբերութիւնն ընդ նմին դառնում է եւ պարտականութիւն կամ ամբողջ կեանքը շարունակուող անխախտելի հաւատարմութեան յարաբերութիւն, որ հիմնուած է կամքի ամենանկեղծ որոշման վերայ: Այնպէս անուանեալ «աղաք «էրն», որ սահ-

մանափակում է ամուսնական դաշն միայն որոշեալ ժամանակով, մինչև որ տեւում է ցանկութիւնն և տրամադրութիւնն առ այն, և որ այսպէս կամենում է գեղեցկագիտական ճաշակով ճախրել մի բաւականութիւնից դէպի միւսն, իւր ամբողջ հիմամբ ու էութեամբ անբարոյական է: Սէրն առանց պարտականութեան գիտակցութեան ամբողջապէս ենթարկուում է բնութեան զօրութեանց: Երջանիկ սէրն այն ժամանակ միայն ստանում է բարոյական արժանիք, երբ նա ենթարկուում է պարտականութեան գիտակցութեանն. այս գիտակցութեամբ միայն փոխադարձ ձգտումն մտնում է այն սահմաններն, ուր երևում է նորա իսկական զօրութիւնը: Իսկ ինչ վերաբերում է դժբաղդ սիրոյ, սա դառնում է լափող կիրք, եթէ անձնուրացութեան և հնազանդութեան պարտականութեան լուրջ գիտակցութիւնը խելամուտ չի անիլ մարդուս կեանքի բարձրագոյն բովանդակութեան ու նշանակութեան: Այստեղ մենք կարող ենք մատնացոյց լինել Պարբիէլիսի վերայ—անձնի վերայ, որ Զիբբերն է ստեղծել ու նկարագրել, հակառակ Պեթէի Վերտերին, որ զոհ է գնում դժբաղդ սիրոյ — Պարբիէլիսը յաղթում է իւր կրից և տակաւ առ տակաւ վերադառնում է դէպի բնական վիճակը:

Այր կամ կին ընտրելը նոյնն է թէ իրան ապագայ ընտրել, որ վճռական նշանակութիւն ունի ոչ միայն կեանքի արտաքին հանգամանքների, այլ և բնաւորութեան զարգացման համար—ապագայ, որին պատրաստ պիտի լինենք հանդիպելու կատարեալ վստահութեամբ և անդորրութեամբ, յուսով միմեանց և Աստուծոյ վերայ, հեզութեամբ և ակնկալութեամբ: Երբ մտածում ես այն թեթեամտութեան վերայ, որով անում են շատերն իրանց ընտրութիւնը, պէտք է զարմանալ, որ աշխարհումս դժբաղդ ամուսնութիւնք միայն այնքան են լինում, որքան կան և պէտք է ուրախանալ, որ այսպիսի դէպքերում զործին շատ է օգնում բաղդը (բերմունքը): Բայց ո՞վ չէ կամենում անձնատուր լինել բաղդի կոյր խաղին, պէտք է կշռէ շատ ծանր հանգամանքներ առաջ քան կանէ համարձակ քայլ ամբողջ կեանքի համար: Այստեղ գլխաւոր խնդիրն է սրտերի համաձայնութիւնը, պահանջն, որ անձինք յար-

մար լինին միմեանց, ընդունակ լինեն միմեանց պատկանելու և միշտ միասին լինելու, ապրելու միմեանց համար ոչ միայն կեանքի նշանաւոր հանգամանքներում և փոփոխութեանց ժամանակ, այլ և միշտ կրկնուող առօրեայ մանր հանգամանքներումն էլ, որոց մէջ երեւում են իւրաքանչիւր անհատի մասնաւոր առանձնայատկութիւնքն և այն ոչ միայն նորա առաւելութիւնքն, այլ և սխալները, միակողմանիութիւնն և թերութիւնքը: Աններդաշնակցութիւնն այս վերջինի վերաբերութեամբ կարող է աւերիչ ազդեցութիւն գործել ամբողջ կենակցութեան վերայ: Բայց որքան էլ մենք մեծ նշանակութիւն տանք ընդհանուր համաձայնութեան այս բարձր կամ ընդհանուր ճշմարտութեան վերաբերմամբ, բայց այնուամենայնիւ միայն այդ բաւական չէ ճշմարիտ կամ իսկական ամուսնութեան հիմքը դնելու համար:

Մենք դառնում ենք կրկին առարկայի դէպի բուն անհատական կողմն, ուրեմն դէպի այսպիսի հարցեր՝ զգում ես արդեօք դէպի այդ որոշեալ ընտրեալ անձդ այնպիսի հակամիտութիւն, անձնուիրութիւն, որ կարողանաս նրան սիրել, զոհ բերել նորա համար մինչև անգամ այն ժամանակ, երբ անցել է նորա զեղեցկութիւնն, երբ նա չբաւորութեան և հիւանդութեան մէջ է, ապրել նորա համար ուրախութեան և տանջանաց մէջ, բազդաւորութեան և դժբաղդութեան ժամանակ, ինչպէս հաճոյ կլինի ամենակարող Աստուծուն, այնպէս որ համբերութեամբ տանես միւս կիսիդ թերութեանց և էլի շարունակես սիրել այդ արարածին, ինչպէս քեզ, աշխատես նորա համար և ոչ մի արգելքի չնայելով մինչև վերջը յոյս տածես աւելի լաւ վիճակի: Քրիստոնեան, որ մտադիր է այսպիսի ընտրութիւն անելու, միշտ կհարցնէ թէ ինչ է որոշեալ դէպքում Աստուծոյ բարի կամքը: Եւ այս կամքը իմացուում է ոչ միայն ներքին ձայնից, որ խօսում է սրտից, այլ և կեանքի արտաքին հանգամանքներից: Պէտք է քննել, թէ արդեօք ներքին ձայնը համաձայն է արտաքին հանգամանքների հետ, որոնք մասնացոյց են լինում այս կամ այն անձի ընտրութեան վերայ, իբրև մեր կեանքի ընթացքի համար յարմար և բնական ընտրութեան վերայ: Որքան որ մեծ է համաձայնութիւնն ներքինի և արտաքինի մէջ, որքան աւելի հաւա-

նութիւն է գտնում ընտրութիւնն երկու կողմից էլ, այնքան էլ պարզ և հաւաստի կերպով տեսնում ենք մենք գորա մէջ Աստուծոյ կամքն կամ ճիշդ շափր մեր վարմունքի համար:

Ամենամեծ երջանկութիւնն այն է, որ մենք հասնենք կատարեալ և ամեն երկբայութիւնից ազատ հաւաստութեան, թէ մենք արեւ ենք պատշաճաւոր ընտրութիւն: Երկբայութեան վիճակի մէջ ընտրութիւն անեւն ոչ միայն վտանգաւոր է և կորստական, այլ և յանցանք է: Աստարեալ հաւաստութիւնն առաջ է գալիս միայն սիրոյ յափշտակութիւնից, սրտի արմատական, խորին-ներքին ձգտումից, միացած պարզ և անդորր խորհրդածութեան և կշռադատութեան հետ: Աինում է հաւաստութիւն, որ առաջ է գալիս գանդաղութեամբ և լինում է հաւաստութիւն, որ յանակնկալս յայտնուում է: Կան անձնաւորութիւնք, որոնք կարօտ են երկարատե կշռադատութեան հաւաստութեան և հաստատ որոշման հասնելու համար, անձինք որոնց մէջ չէ կազմուում անմիջապէս հայեացք, ներշնչումն, իրրե աղբիւր որոշականութեան: Եւ որպէս զի հնար լինի շտապ և անմիտ որոշումներից ազատ մնալ ամենքի համար օգտաւէտ է խորհրդածութիւնն և կշռադատութիւնը: Բայց կան և այլ տեսակ մարդիկ, որոնք իսկոյն կազմում են հանճարեղ հայեացք, անմիջական ըմբռնումն (և այս ոչ միայն մտքի աչքով այլ և սրտի) և որոնք հէնց առաջին հանդիպման ժամանակ հասնում են հաւաստութեան: Բայց այս անակնկալ հաւաստութիւնն որպէս զի մի անցաւոր տպաւորութիւնից աւելի կշիռ ունենայ, պէտք է լուրջ և երկարատե խորհրդածութեան բովքի միջով անցնի: Այստեղ կարելի է յիշել Գեօթէի վեպն, որոյ մէջ Հերմանն անակնկալ և բոլորովին չնախատեսած արտաքին հանգամանաց շնորհիւ գտնում է իւր Գորոթէային և հէնց առաջին իսկ հանդիպման միջոցին ընտրում է նրան իւր սրտում իրրե գտած հարսին և հետեւեալ կերպով է բացատրում այդ իւր մօրն, որոյ առաջ բաց է անում իւր սիրտը. «Այն, դա նա է, բայց ես նրան իրրե հարս ինձ հետ տուն չեմ բերիլ, արդէն այսօր նա կերթայ և գուցէ կորչի ընդ միշտ ինձ համար պատերազմի աղմուկի և տխուր թափառման ժամանակ աստ և անդ»:

Բայց առաջ քան կհամարձակէր նա անելու վճռական քայլը, նորա սրտի արած ընտրութիւնը պէտք է կնքուէր ծնողաց համաձայնութեամբ և փորձառու բարեկամաց հաւանութեամբ:

Որ առանց նախապէս ծնողաց համաձայնութիւնն անելու չպէտք է ամուսնանալ — այդ արդէն երեւում է հինգերորդ պատուիրանից և նրան հակառակ չեն իրաւաբանական բացատրութիւնք կատարելահասութեան մասին, որոնք ամենեւին չեն վերաբերում մանկական յարգանաց զգացմունքներին: Հին ասացուածք է «Ծնողաց օրհնութիւնը շինում է զաւակաց տունը»: Այս խօսքերի մէջ չէ յայտնուում այն միտքը, թէ ծնողներն ունեն անպայման իշխանութիւն և իրաւունք արգելք դնելու իրանց զաւակաց ամուսնութեան, աւելորդ է ասելն, որ և ոչ պէտք է ստիպեն նրանց ամուսնանալ: Հակառակ նոցա կամաց: Բայց պէտք է դրականապէս ասել, որ եթէ մէկը հակառակ ծնողաց կամքի ստիպուում է ամուսնանալ, այդպիսին պէտք է ունենայ ծանրակշիռ բարոյական պատճառներ և ընդ նմին պէտք է շրջանկատ կերպով աչքի առաջ ունենայ եւ բոլոր այլ հանգամանքներն էլ: Յայտնի բան է այսպիսի դէպքում կարող են պատահել ծանր ընդհարումներ, բաւական է մատնացոյց լինել Ռոմէոյի և Նուրիայի վերայ (Յէկսպիրի ողբերգութեան մէջ) հին թըշնամութեան վերայ, որ կար նոցա ընտանեաց մէջ, երիտասարդ զոյգի չափազանց եռանդոտ սիրոյ վերայ, որ բոլորովին ոտնակոխ էր անում յարգանքը դէպի ծնողները, նոյնպէս և նոցա ծնողաց անհաշտ և սոսկալի ատելութեան վերայ, որ այն աստիճանին հասնում է, որ ծնողներն անիծում են իրանց զաւակաց սերը: Սոյնտնման ընդհարումն կարող է պատահել և այլ դէպքերում՝ զանազան աստիճանով և ձևով, թէև գուցէ աւելի պակաս գաղափարական, բայց բարոյական վերաբերութեամբ նշանաւոր երեւոյթներում: Ռոմէոյի և Նուրիայի պատմութիւնն ամենքի համար էլ եղբերեղական ձևով է վերջանում, թէ զաւակների և թէ ծնողաց համար, որովհետև երկու կողմերն էլ մեղք են գործում, երկու կողմերի արդարութիւնն և յանցանքն այնպէս խճճուած են, որ նրանց բաժանել անհնարին է:

Ամեն ամուսնութիւն, որ մարդս կատարում է ինքնակամ, և որոյ

ժամանակ մերձաւոր ազգականութիւնն և յարմարութիւնը սորա հետ առանց ուշադրութեան է թողնուում և մինչև անգամ խզուում են կայերը ծնողաց և զաւակների մէջ, — ամեն այսպիսի ամուսնութիւն վաղ թէ ուշ ստանում է իւր տրիտուրը (պատիժը)։ Մինչև անգամ ամենալաւ դէպքերում, երբ բարոյական իրաւունքը զաւակաց կողմումն է, այսպիսի ամուսնութիւնը այս կամ այն եղանակով հաղորդում է բոլոր ընտանեկան կեանքին մի տեսակ վիշտ, դժբաղդութիւն բազդաւորութեան մէջ, աններդաշնակութիւն ընդհանուր ներդաշնակութեան մէջ։

Ըստ հակամիտութեան և ըստ հաշուոյ ամուսնութեանց մէջ եղած հակասութիւնն ու դիմադարձութիւնն ոչընչանում են իսկական ամուսնութեան մէջ, որ մէկի և միւսի միաւորութիւնն է։ Հակամիտութիւնն, որ չէ բովանդակում իւր մէջ թէգուզ անգիտակցաբար խորհրդածութեան և կշռադատութեան տարր, շուտով կերևի ցնորք։ Սոյսրաբար կշռադատութեան կամ հաշուոյ ամուսնութիւն կոչուածն է ամուսնութիւն կամ յարմարեցրած պատշաճութեան և վայելչութեան կամ դրամական հաշուոյն և կամ է հասարակական բարձր գիթք, աստիճան և կոչումն ստանալու նպատակով։

Բոլոր այսպիսի ամուսնութիւնք անբարոյական են և գուցէ կարող են նորա եւ տնտեսական, ինայտղական ևս համարուել, բայց երբէք խոհեմ և բնական չեն կարող անուանուել։ Ընդհակառակն կան յիշաւի խոհեմ ամուսնութիւնք, որոնք թէև տարբերուում են ամուսնութիւնց ըստ սիրոյ, բայց դժբեկի չեն այն հիման վերայ, որ դոցա շարժառիթը պարտականութեան յանձնառութիւնն է։ Յոյց տանք այսպիսի մի օրինակ. մի մեծահոգի կին, իւր սիրելի հանգուցեալ ընկերուհու զաւակներին մայրութիւն անելու համար, պարտականութիւն է համարում ամուսնանալու նորա այրիացած ամուսնոյ հետ, որ առաջարկում է նրան իւր ձեռքը և դէպի որը նա ունի յարգանք և հաւատարմութիւն, բայց չէ զգում սէր, այս բառիս բուն նշանակութեամբ։ Յայտնի բան է, որ ոչ ոք չի զլանալ այսպիսի ամուսնութեան բարոյական արժանիքն, ամուսնութեան, որոյ մէջ կարող են զարգանալ վսեմ և գեղեցիկ առաքինութիւնք։

ԱՆՀԱՒԱՍԱՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔԻ կոչուում են անհասարակ այնպիսիք, որոնց մէջ ամուսնութեան նպատակը — այն է որ երկուսից մի անձն բաղկանայ — անհասանելի, անկատար է մնում, մարդու և կնոջ մէջ եղած չափազանց տարբերութեան պատճառով, թէ կրթութեան և թէ կոչումի կողմանէ: Սովորական կարծիք է, թէ միայն չափազանց մեծ տարբերութիւնն ամուսինների մէջ, կրթութեան կողմանէ, կարող է ամուսնութիւնն անհաւասար անել. ընդհակառակն կրթութիւնն ու լուսաւորութիւնն ամեն տեղ կարող է ջրել և հաւասարել ամեն դասակարգական տարբերութիւնք: Մենք հարկ չենք զգում պաշտպանելու լուսաւորութեան գորութիւնը, նոյնպէս ընդունում ենք, որ ներկայ դասակարգերը հին եգիպտականների նման չեն և որ մեր ժամանակում դասակարգական տարբերութիւնք շատ թուլացած են, քան առաջ էին, երբ անպարտելի սլատնէշ կամ աւելի լաւ է ասել վիճ մեծ էր բաժանում բարձր դասակարգերը ստորիններից: Բայց ստիպուած ենք խոստովանելու, որ պատահում են դէպքեր, երբ ամուսնութեան ժամանակ անշուշտ հարկաւոր է ուշք դարձնել դասակարգական տարբերութեանց վերայ, որովհետեւ երբ մարդ ամուսնանում է որոշեալ անձնաւորութեան հետ, նա կապուում է եւ նորա բոլոր գերդաստանի հետ ու սրանով մտնում է որոշ հասարակական յարաբերութեանց մէջ, որոնք կարող են ընդհարումներ ունենալ այլ բարոյական բնաւորութիւն ունեցող շահերի հետ: Ահա հէնց այս պատճառով տիրող և իշխող անձինք, որոնք առանձին դիրք ունին և առանձին պարտականութիւնք առ պետութիւնն, չպէտք է ամուսնութեան կապով կապուեն հասարակ քաղաքացիների հետ. այսպիսի ամուսնութիւնն անհաւասար է: Եթէ մի յայտնի անձն կարողանար բոլորովին ազատուել կապերից ընտանիքի հետ և յանկարծ մնար միայնակ, անհայր, անմայր, անեղբայր և անքոյր, գուրկ ազգականներից և բարեկամներից, այնպիսի դէպքում գլխաւոր արգելքները կարող էին ոչընչացրած լինել: Բայց որովհետեւ այս բարոյապէս անհնարին է, ուստի և կարող են գոյանալ մի քանի հասարակական յարաբերութիւնք, որոնց հետեւանքը կլինեն ծանրակշիռ և սուր ընդհարումներ:

Ի շարս անհաւասար ամուսնութեանց դասելի են եւ անպէս անուանեալ «հրեշային կամ տգեղ ամուսնութիւնք», որոնք թէև չեն շօշափում հասարակական յարաբերութիւնքը, բայց վիրաւորում են նոյն իսկ մարդկային բնութիւնն, այն է երբ ամուսինների մէջ չափազանց մեծ տարբերութիւն կայ տարիների, երբ մի գառամեալ այր մարդ ամուսնանում է մատաղահաս կնոջ հետ կամ ընդհակառակն պառաւ կին առնում է երիտասարդ մարդ: Հրեշային պսակների շարքում դասելի է եւ ամուսնութիւնն, երբ բանական և իմաստուն կի՛նն ամուսնանում է սահմանափակ և յիմար տղամարդու հետ. այսպիսի ամուսնութիւնն անբնական երևոյթի տպաւորութիւն է գործում: Պակաս հրեշային է երևում շքնորհալի և ընդունակ տղամարդի ամուսնութիւնը սահմանափակ կնոջ հետ, թէև այսպիսի ամուսնութիւնն էլ անհաւասար է: Իրերի կանոնաւոր վիճակն այն է, երբ ամուսինների ընդունակութիւնքն ու կրթութիւնն այնպիսիք են, որ նոցա մէջ կարող է գոյութիւն ունենալ յիրաւի փոխադարձութիւն ամեն կողմանէ:

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊՍԼԿ: Ամուսնութիւնը միայն ամուսնացողներին վերաբերեալ գործողութիւն չէ. այլ իւր խորին նշանակութեամբ ամբողջ հասարակութեան համար է. նա մի և նոյն ժամանակ պետութեան ու եկեղեցուն էլ է վերաբերում: Թէև առն և կնոջ ամուսնանալը միմեանց հետ նոցա կամքից կախուած է, բայց նա վերջնականապէս կարող է հաստատութիւն գտնել պետութեան և եկեղեցու կողմից:

Ամուսնութիւնը կարօտ է պետութեան և եկեղեցւոյ հաւանութեան և հասարակութեան ինչպէս և իւր ամրութեան համար կարօտում է հասարակութեան պահպանող ու կազդուրող գորութեան: Պետութիւնը պէտք է որոշէ պայմաններն, որոյ մէջ նա իւր կողմից ամուսնութիւնն օրինաւոր պէտք է համարէ, զոր օրինակ պէտք է յայտարարէ, թէ երբ նա զաւակներին օրինաւոր կհամարէ և սորա համաձայն պէտք է պահանջէ, որ ամուսնութիւնը կատարուի պաշտօնական եղանակով և վկայագրով, որով և յայտնուում է և հաստատուում, որ ամուսնութիւնը կատարուել է և որով նա ապացուցուում է. բայց այս շատ դէպքերում մեծ նշանակութիւն ունի:

Բայց եկեղեցին էլ իւր կողմից պէտք է հսկէ, որ ոչինչ արգելք չլինի իսկական ամուսնութեան, զոր օրինակ չլինին ամուսնացելոց մէջ արգելեալ մերձաւոր ազգականութեան կամ ապահարզանի գանազան ձևեր: Զէ կարելի բնաւ ասել, որ այս դէպքում եկեղեցու և պետութեան հայեացքները համաձայն լինեն: Որովհետև ամուսնութիւնը միայն քաղաքական նշանակութիւն չունի, այլ մանաւանդ աւելի բարոյական — կրօնական, ուստի և եկեղեցին պէտք է պնդէ որ ամուսնութիւնը ամրապնդուի ու հաստատուի եկեղեցական սրբազործութեամբ, որով ամուսնացողները կնքեն իրանց դաշն Աստուծոյ աչաց և եկեղեցու առաջ, լսեն Աստուծոյ պատուէրներն ու խոստումները, յանձնեն իրանց եկեղեցու միջնորդութեան ու ստանան Աստուծոյ օրհնութիւնը քրիստոնէական ամուսնական կեանքի համար: Եկեղեցական պսակը եկեղեցու հին աւանդութիւն է. ուստի և ոչ մի քրիստոնեայ, որ ամուսնանում է, չպէտք է շեղուի նրանից և ինքնակամ խախտէ այն, որով նա կարծես ցոյց տուած կլինի, որ ամաչում է իւր դիտաւորութիւնը պարզապէս յայտնելու Աստուծոյ և նորա եկեղեցու առաջ: Ընդհակառակն նա կարևորութիւն պիտի զգայ, որ նորա որոշումն ամուսնանալու եկեղեցին հրապարակէ, հանդիսաւոր կերպով հաստատէ այն և օրհնէ:

Այսպէս ամուսնութիւնն ունի թէ քաղաքական և թէ եկեղեցական կողմ և ծանրակշիռ ու նշանաւոր գործ համարելի է. ուստի և եկեղեցին ու պետութիւնը հորա վերաբերութեամբ հարկ է, որ ներգործեն համաձայնութեամբ և ներդաշնակութեամբ: Այս հիման վերայ ի հնուց եկեղեցական և քաղաքական տարրները այս առարկայի վերաբերութեամբ միանում են քրիստոնեայ ազգաց մէջ, այնպէս որ ամուսնութեան եկեղեցական սրբազործութիւնն էր հաստատում նրան քաղաքականապէս էլ: Եթէ նեկայումս պահանջ է յայտնած, որ քաղաքական ամուսնութիւնը բաժանուի եկեղեցական ամուսնութիւնից, յայտնի բան է ոչինչ չէ կարելի ասել, որ ամուսնութեան երկու կողմերն էլ, առանձին վկայագրով հաստատուեն: Բայց եթէ ընդ նմին յայտնուում է կարծիք, թէ քաղաքական ամուսնութիւնն, որ իբրև այսպիսի բոլորովին գուրկ է եկեղեցական տարրից և կարող է աւելորդ համարել եկեղեցական պսակադրութիւնն և

այս ոչ միայն առանձին կուսակցութեանց համար այլ և ամբողջ ազգի համար, և թէ ամուսնութեան քաղաքական կատարումն մի անպայման — անհրաժեշտ գործողութիւն է բոլոր ամուսնացելոց համար, այն ինչ իւրաքանչիւրի ազատ կամաց թողնուում է եկեղեցական պսակադրութիւնն, եթէ ասում ենք, այսպիսի կարծիք յայտնուում է, մենք կարող ենք դորա մէջ տեսնել միայն տխուր և ցաւալի խախտումն քրիստոնէական ազգային սովորութեան *):

Յարգանքը դէպի ամուսնութեան սրբութիւնն միայն կարող է խախտուիլ, եթէ պետութիւնը կհրաժարուի քրիստոնէական հայեցակէտից նորա նշանակութեան վերայ և եկեղեցական պսակը լոկ անհատական կամաց գործ կհրատարակէ (հիմնուած մասնաւոր կարծքի և անձնական ցանկութեան վերայ) եթէ բարձրագոյն իշխանութիւնն առաջարկէ ազգին ազատ կացուցանել իրան ամուսնութիւնն Աստուծոյ խօսքով — աղօթքով սրբագործելից և իւր կողմից պահանջէ միայն, որ կատարուած լինի լոկ իրաւաբանական դաշնադրութիւն:

Ձնայելով ամենանուրբ մեկնութեանց և բացատրութեանց էլ, ժողովրդի մեծամասնութիւնն այսպիսի առաջարկը կհամարէ հրաւեր և պատուէր թողնելու եկեղեցական պսակն իբրև մի աւելորդ և անբնական գործողութիւն, իբրև մի ներկայ ժամանակիս անյարմար գործ: Անտարակոյս մենք պէտք է համաձայնենք հետևեալ կարծքին թէ քաղաքական ամուսնութիւնք կարող է դառնալ անհրաժեշտ (տանելի) չարիք որոշեալ պայմաններում, այն է երբ ժողովուրդն ընդհանրապէս կհրաժարուի քրիստոնէութիւնից, երբ

(*) Ծանօթ. Հեղինակն, իբրև բողոքական ամուսնութիւնն եկեղեցու խորհուրդ չէ ընդունում, բայց և այնպէս անշուշտ կարևոր է համարում որ քրիստոնէայ պետութեան մէջ ամեն ամուսնացողների վերայ պսակադրութեան կարգ կատարուի եկեղեցում: Կարիք չկայ երկարօրէն բացատրելու թէ որպիսի մեծ կշիռ կստանար հեղինակի աչքում եկեղեցական պսակադրութիւնն, եթէ նա մեր Հայաստանեայց և այլ արևելեան եկեղեցեաց պէս դաւանէր որ ամուսնութիւնը խորհուրդ է, որոյ մէջ որոշուած է ամուսնացելոց դաշն և խնդրանք է միութեան շնորհ օրհնեալ թննքոց և շատեցողութեան արտօնութեան համար:

բազմութեան մեծամասնութիւնն անհաւատ կլինի: Բայց այս ընդ նմին կլինէր ժողովրդեան խորին անկման նշան և իրերի անուղղելի վիճակ: Բայց քանի որ դեռ ևս չկայ ընդհանուր հրաժարումն քրիստոնէութիւնից, ներելի չէ կարգադրել քաղաքական ամուսնութիւնն, իբրև ընդհանուր ներգուծութիւն ունեցող և օրինաւոր ու իրաւացի գործողութիւն. աններելի է պահանջել, որ բոլոր ժողովուրդը յարմարուի այլակարծիքների ու անհաւատների փոքրամասնութեան, որոյ համար յամենայն դէպս պէտք է կարգուի քաղաքական ամուսնութիւն: Այսպէս խախտուումն ժողովրդի մէջ քրիստոնէական մտածողութեանց հիմունքն և յարգանքը դէպի քրիստոնէական աւանդութիւնքը՝ այսպէս քաղաքական ամուսնութիւն կարգող անձինք յանցաւոր են երևում նրանում, որ նպաստում են և շտապեցնում ժողովրդի կրօնական—բարոյական անկումն:

Քաղաքական ամուսնութեան պաշտպանները սովորաբար հետեւեալ պատճառաբանութիւնն են առաջ բերում, թէ ամուսնութիւնն աւելի հին է քան քրիստոնէութիւնն. ուստի և քրիստոնէական օրհնութիւնն մի անհրաժեշտ կարևոր գործողութիւն չէ ամուսնութեան համար, և կապ չունի ամուսնութեան գաղափարի հետ: Մենք այդ լաւ գիտենք: Մենք յիշեցնում ենք միայն այն հանգամանքն, որ քրիստոնէութիւնից առաջ ապրող ազգերն ամենեւին անկրօն ազգեր չէին, ընդհակառակն նոքա սովորութիւն ունէին կապելու ամուսնութեան սկիզբն ու կատարումն կրօնի հետ: Նոյնպէս ուշադրութիւն հրաւիրում ենք նորա վերայ, որ ոչ—քրիստոնեայ ամուսնութեանց մէջ տարբերութիւն կայ: Այդ ամուսնութիւնք կարող են լինել ցքրիստոնէականք ինչպէս և զկնի—քրիստոնէականք, որոնք քրիստոնէութիւնից հետեալ և դէպի քրիստոնէական օրհնութիւնը յարգանք չունեցողների ամուսնութիւնք են: Մենք չենք կամենում որ այդ վերջին տեսակի ամուսնութիւնք օրէնքով սրբագործուէին մեր ժողովրդեան (ազգի) համար: Քաղաքական ամուսնութեան պաշտպանութեան համար սովորաբար մատնացոյց են լինում Լուտերի վերայ, որ յաճախ գործ էր դնում հետեւեալ նախադասութիւնը՝ ամուսնութիւնն աշխարհիկ գործ է, բայց երբ Լուտերն այդ խօսքերն ասում էր իբրև բողոք պապի դէմ, որ իւր գոռողու-

Թեամբ եւ ամուսնութեան վերաբերութեամբ համարձակում էր անելու այնպիսի կարգադրութիւնք, որոնք միայն պետութեան կը պատշաճեն: Աւրեմն Լուտերն այս դէպքում ուզում էր հակառակ եկեղեցական իշխանութեան հաստատել պետութեան իրաւունքը: Բայց ոչինչ նրան այնպէս օտարոտի և հակառակ չէր քան պրն-դումն, թէ քրիստոնէութիւն ու եկեղեցին ոչ մի յարաբերութիւն չունին ամուսնութեան հետ:

Առաջ են բերում և հետևեալ դատողութիւնն էլ. «Ռիցուք մինչև անգամ, որ քաղաքական ամուսնութիւնը զուրկ է կրօնական տարրից, բայց նա յամենայն դէպս մի բարոյական հաստատութիւն է, որ իբրև այդպիսի պիտի ճանաչուի»: Նատ բարևոք: Մենք սրան պէտք է պատասխանենք, թէ որքան աւելի հաստատութիւն կգտնէ քաղաքական ամուսնութիւնը կեանքի մէջ, այնքան աւելի ևս պարզապէս կերևի, թէ պետութիւնն որպիսի լրջութեամբ է վերաբերում դէպի բարոյականութիւնն, երբ որ նա արդէն յայտնած է իւր վերաբերութիւնն առ կրօնը: Այդ կերևի ոչ միայն կարգադրութեանց մէջ, որոնք վերաբերում են ամուսնութեան արգելեալ աստիճանի ազգակցութեանց, այլ և կանոնների մէջ, որոնք վերաբերում են պսակի լուծման և բաժանեալ ամուսինների երկրորդ պսակին:

Մենք կտեսնենք, արդեօք պետութիւնն այդ հանգամանքում լուրջ ուշք կդարձնէ բարոյականութեան վերայ, կձանրացնէ արդեօք պսակի լուծումն և բաժանեալների կրկին ամուսնութիւնը, թէ քաղաքական ամուսնութիւնը կնպաստէ միայն, որ արդէն տարածուած բարոյական անզսպութիւնը զօրանայ, թիթեանան պսակի լուծումն ու կրկնամուսնութիւնք: Ընդհանրապէս կտեսնենք, թէ արդեօք հնարաւոր կլինի պահպանել միակին ամուսնութիւնն, երբ մենք ազատ կլինենք քրիստոնէութեան հեղինակութեան ազդեցութիւնից: Մենք համոզուած ենք, որ ժողովրդի մէջ միակին ամուսնութիւնը ցմահ կարող է պահպանուել միայն և եթ կրօնի հեղինակութեամբ և երբէք չէ կարող հաստատուն մնալ փիլիսոփայական եզրակացութեանց հիման վերայ: Եւ ի՞նչ կարող էր արգելել քաղաքական ամուսնութիւն կատարելու որոշ ժամանակափոխի

համար առանց իրան կապելու կաշկանդելու ցմահ: Այստեղ կարելի էր մատնացոյց լինել հորի ազատութեան պաշտպան շատ հեղինակութիւն ունեցող անձանց վերայ, որոնք պաշտպանում են եւ ժամանակաւոր մտնող-լինող:

Այն ոյժն, որ իւր ազդեցութեամբ ժողովրդի կեանքի վերայ դեռ ևս դիմադրում է քաղաքական ամուսնութեան հաստատուելուն, է քրիստոնէական սովորութիւնն ու աւանդութիւնը: Բացի դորանից քաղաքական ամուսնութիւնը (մեր խօսքն այնպիսի քաղաքական ամուսնութեան վերայ է, որ ուզում է մերժել եկեղեցական պսակադրութիւնն իբրև աւելորդ գործողութիւն) դիմադրութիւն է գրտնում իգական սեռի կողմից: Որովհետև ոչ մի կանացի հոգի, իւր նուրբ բարոյական զգացմամբ, արհամարհանք չի համարիլ իւր ապագան, խոնարհութեամբ և յուսով, կրօնի պաշտպանութեան ներքոյ դնելու, ոչ մէկ կին չի բաւականանալ ամուսնութեամբ, որ իւր մէջ չէ բովանդակում ոչինչ վսեմ գաղափարական և որով նա դատապարտուած պիտի լինի իւր ապագայ բաղդը բացառապէս դնելու իրաւաբանական դաշնադրութեան պաշտպանութեան ներքոյ:

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ: Ամուսնութեան խոչընդոտներից մենք կյիշենք մանաւանդ այնպիսիք, որոնք հիմնուած են ազգականութեան բնական յարաբերութեանց վերայ (սոքա են ազգականութեան արգելեալ աստիճանները), ուրեմն այն կարգադրութիւնը կյիշենք, որով այն անձինք, որոնք արդէն կապուած են արեան կապերով, չպէտք է ամուսնանան միմեանց հետ: Սորա գլխաւոր ընդհանուր հիմն այս է. նոքա ոյք կապուած են արեան կապերով, արդէն իրար հետ գտանուում են յարգանաց և սիրոյ յարաբերութեանց մէջ, որոնք ամուսնութեամբ կարող են ոչնչանալ և որ այսպիսի ամուսնութիւնք են պիղծ և հակաբնական խառնումն, խախտումն են սահմանաց, որ ինքն Արարիչն է դրել: Ծննդոց գրքի գլ. Բ. 24 ում ասած է. Ուստի Լուսինն այր զհայր իւր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ: Այս պարզապէս որոշում է արդէն արեանական ազգականների մէջ եղած կապի սահմանն և սկիզբն նոր կապի, որ պիտի կատարուի ամուսնութեամբ: Այն խօսքերում, թէ

մարդս պէտք է թողնէ իւր հօրն ու մօրը, յայտնուում է ոչ միայն այն միտքը թէ չպէտք ամուսնութիւն լինի ծնողաց և զաւակների մէջ, այլ և աւելի ընդհանուր միտք, թէ մարդս պէտք է իրան ամուսին որոնէ ոչ թէ իւր հօր տանը և իւր սեպհական գերդաստանում, այլ օտարի տանը, օտարի գերդաստանում: Անպայման կերպով արգելեալ ամուսնութիւն պիտի համարուի ոչ միայն ամուսնութիւնը ծնողաց և զաւակաց մէջ, այլ և եղբարց և քերց ու այլ մերձաւոր ազգականաց մէջ: Նկատած է, որ մինչև անգամ կուսակաշտ ազգերից շատերի մէջ բնական զգուանք էր զգացուում դէպի այդպիսի ամուսնութիւնք, զգուանք որ անբան կենդանեաց մէջ չէ նկատուում և որ մարդուս մէջ նա միացած է բարոյական զգուանքի հետ: Նոյն զգուանքը զգացուում է և դէպի ամուսնութիւնը խորթ հօր և աղջկայ, խորթ մօր և որդու ու խորթ եղբարց ու քերց մէջ, որովհետև սոցա մէջ յարգանաց և սիրոյ կապ կայ, որ չպէտք է ոչնչացնել կամ պղծել ամուսնական կապով: Պօղոս առաքեալը դատապարտում է այսպիսի դէպքն, իբրև յոյժ գայթակղեցուցիչ, երբ Աորնթացւոց եկեղեցում մէկը կենակցելիս է եղել իւր խորթ մօր հետ (Առ Աորնթ. գլ. Ե. 15): Բանաստեղծներից Սոփոկլէսը նկարագրում է Էդիպոսի եղեռնագործութիւնն, Էդիպոսի, որ անգիտութեամբ ամուսնանում է իւր հարազատ մօր Եօկաստէի հետ, բայց չէ հանգստանում նրանով, որ արածն անգիտութեամբ էր, այլ ընդհակառակն ինքն իրանից սարսափում է և որպէս զի մշտական իտաւարի մէջ ընկզմուի, հանում է իւր աչքերը: Բայրոնը (իւր Մանֆրէդ երկասիրութեան մէջ) Մանֆրէդի յարաբերութեանց մէջ դէպի իւր հանգուցեալ Ասթարթէ քոյրը զգալ է տալիս նորա գաղտնի ներքին վիշտն ու սարսափն, որ հիմնուած է եղբօր և քրոջ մէջ եղած յանցաւոր սիրահարական յարաբերութեանց վերայ:

Վերևը ցոյց տուած անպայման արգելումն, նմանութեան և համեմատութեան զօրութեամբ, տարածուում է և ազգականութեան այլ զանազան ճիւղաւորութեանց վերայ (respectus parentelae): Արգելուում են հետևեալ ամուսնութիւնք. աներոջ և հարսի մէջ, զոքանչի և փեսայի մէջ, ամուսնութիւնք հօր կամ մօր եղբարց և քեց հետ, եղբօր այրւոյ հետ, հանգուցեալ կնոջ քրոջ հետ, հօրա-

քրոջ կամ մօրաքրոջ զաւակաց մէջ և այլն և այլն: Թէև այստեղ դժուար է սահմանն որոշել, որովհետև զանազան օրէնսդրութեանց մէջ նա այլ և այլ եղանակով է որոշուում: Եթէ եւ անհնար է ապացուցանելու, որ Մովսէսի օրէնսդրութիւնը վերաբերութեամբ ամուսնութեան արգելեալ աստիճանների ազգականութեանց մէջ (Ղևտ. ԺԼ.) բառացի կերպով առանց բացառութեան պարտաւորական զօրութիւն ունի և քրիստոնէից համար, բայց այնու ամենայնիւ նա իւր խորին ըմբռնմամբ այդ բնական յարաբերութեանց միշտ պէտք է հիմք լինի մեզ զբաղեցնող խնդիրների քննութեան և որոշման ժամանակ և ներկայ օրէնսդրութեանց մէջ նրան պէտք է աչքի առաջ ունենալ: Պէտք է խոստովանել, որ նորագոյն օրէնսդրութիւնք այս կէտում շատ զիջող են և վերաքննութեան կարօտ են խիստ ուղղութեամբ, որովհետև երկիւղ կրելի է, որ մի գուցէ արգելքը չափազանց նեղ սահմանների մէջ դրուի: Յայտնի բան է չէ կարելի չանել թոյլտուութիւնք, որոնք հեռաւոր ազգականութեանց վերաբերութեամբ ունեն օրինաւոր հիմունք: Այս թոյլտուութիւնք այն միտքն ունեն, որ առանձին դէպքերում կարելի է բացառութիւն անել, բայց անփոփոխելի կանոն պէտք է լինի, որ ամուսինը պէտք է ընտրուի ոչ թէ մերձաւոր գերդաստանից, այլ օտար ընտանիքից: Այստեղ բարոյական տեսակէտի հետ միանում է և ֆիզիքականը: Նատ օրինակներ ապացուցած են, որ երբ ամուսնութիւնք շարունակուում են մի և նոյն ընտանիքի մէջ, առանց նոր և թարմ տարրների խառնման, ընտանեկան կերպարանքի կնիքը թոյլ է լինում և թարշամած ոչ միայն մարմնաւոր, այլ և մտաւոր կողմանէ: Այսպիսի ամուսնութեանց պտուղները լինում են մանկունք խեղք, կոյրք և խուլք ի ծնէ, մինչև անգամ բազմաթիւ խելագարութիւնք, որոնք տեղի են ունենում Անգղիայում և Ֆրանսիայում, պէտք է բացատրել նոյն պատճառով:

Վերոյիշեալներից միայն մի բացառութիւն կայ, այն է մարդկային առաջին զոյգի զաւակունք: Աշխարհիս առաջին գերդաստանի մէջ եղբարք պէտք է ամուսնանային իրանց քերց հետ: Այս մասին պէտք է յիշել, որ այս առաջին գերդաստանը կազմում էր ամբողջ մարդկութիւնը: Յայտնի բան է այն ժամանակ արդէն ծնողաց և

զաւակների մէջ կար կրճիմ — հակառակութիւն: Ընդհակառակն ինչ վերաբերում է փոխադարձ յարաբերութեան զաւակների մէջ, կրճիմն գերդաստանի և ցեղի մէջ, նոյնպէս և յարաբերութիւնք եղբարց ու քոյրերի և յարաբերութիւնն արական և իգական սեռի մերձաւոր ազգականի հետ դեռ ևս անտարբերութեան վիճակի մէջ էր:

Միայն այն ժամանակ, երբ զարգացան այս տարբերութիւնք, երբ մարդկութիւնը բաժանուեցաւ այլ և այլ գերդաստաններ, որոնց իւրաքանչիւրն իւր որոշ միակողմանիութիւնն ունէր, զգացին և կարևորութիւնը միմեանց լրացնելու, միայն այն ժամանակ, ասում ենք, կարող էր երևել պահանջ մի կողմից պահպանելու յարգանաց և սիրոյ բնական յարաբերութիւնը գերդաստանի անդամների մէջ, որով և կարող էր միայն ըստ պատշաճին զարգանալ եղբայրական սէրը, իբրև այսպիսի: Միայն այս ժամանակ կարող էր միւս կողմից երևել պահանջ շարունակելու մարդկային ազգը միաւորութեամբ զանազան ընտանիքների և կազմութեամբ նոր գերդաստանների: Վերոյիշեալ բարոյական և բնական զգուանքը դէպի ամուսնութիւնը մերձաւոր ազգականների մէջ ծագեցաւ արդէն ժամանակի ընթացքում մարդկութեան պատմական զարգացման հետ:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ: Ամուսնական կենսակցութեան մէջ այբ և կին պէտք է կատարեն Աստուծոյ պատուէրներն, որոց նոքա պէտք է հնազանդեն: Նոքա ամուսնութեան վերայ միայն բաղդաւորութեան, երջանկութեան և բաւականութեան տեսակետից չպիտի նայեն, այլ պէտք է հասկանան և ճանաչեն այն, իբրև կոչումն, որոյ սրբազան պարտականութիւնքը պարտական են կատարելու: Այլն ըստ հրամանի Տեառն պէտք է լինի գլուխ կնոջ (Մննդ. Գ, 16: Եփես. Ե. 23: Առ Կորնթ. ԺԱ. 5) և մի ևնոյն ժամանակ է գլուխ բոլոր գերդաստանի, նա պէտք է հոգայ նորա մասին, ունելով որոշ զիրք պետութեան և քաղաքական հասարակութեան մէջ, ուր նա գտնում է իւր գործունէութեան շրջան: Կինը ընտանեաց կենդրոնը պիտի լինի և սրան կարգի բերէ, և թէև նա ամուսնու-

երևի հասարակութեան առաջ միայն իբրև բացառութիւն, այն ինչ ներկայ գրականութիւնը չափազանց հարուստ է կանաչի գրքական երկերով: Պնդում ենք նայնպէս, որ կնոջ գեղարուեստական և գրական գործունէութիւնը պէտք է ենթարկուի նորա գլխաւոր կոչման, որ նրան մասնացոյց է լինում տնային կեանքի և գերզատանի վերայ: Ի ՚կերջոյ մենք համոզված ենք, որ ոչ մի կանաչի տաղանդի չէ առած կարողութիւն գեղարուեստի և գիտութեան մէջ իսկ—ստեղծագործական և կատարելապէս առանձին գործունէութիւն զարգացնելու, ստեղծելու այնպիսի մի գործ, որ գեղարուեստի և գիտութեան պատմութեան մէջ ունենար յիշուի իրական կշիռ, յառաջադիմութեան համար նշանակութիւն ունենար, այնպէս որ գեղարուեստի և թէ գիտութեան պատմութիւնը կը մնային նոյնն, եթէ կանաչի արուեստասիրական երկասիրութիւնը աշխարհ չը գային էլ: Ազատութեան պաշտպանները, զորօրինակ Ջոն Սոթ Միլլն, այն կարծքի են, թէ կանաչի գեղարուեստական և գրական օրինակելի երկասիրութիւնը իսկոյն հանդէս կը գան, երբ կանաչք կազատուին այր մարդու բռնութիւնից, որ թուլացրել է նոցա բնդունակութիւնն և խոչընդոտ եղել նոցա զարգացման: Կարծում են, որ այն ժամանակ կանանց միջից հանդէս կը գան Հոմերոս, սպաս Արիստոտել, Բեաթալէն: Մենք կանգ չենք առնիլ այս կարծքի վերայ, որ հիմք չունի, այլ կը հետևենք միայն «ներսփական մեդալի» փորձին: Արհեստն, որոյ մէջ կնոջ տաղանդը կարող է հասնել իսկական ինքնուրոյնութեան, բեմական արհեստն է և այս հէնց այն պատճառով, որ նա իսկապէս նմանողական արհեստ է, փոխ առած բանաստեղծական ստեղծագործութիւն է: Բայց և այս արհեստի մէջ կնոջ համար կայ մի տեսակ վտանգ:

Ներկայումս ժամանակակից ոգւոյն պահանջներին բաւարարութիւն ապու համար փորձ փորձուեցաւ թոյլատրել կանանց լինելու ուսանող կատարելալ ակադեմիական իրաւունքներով, նոյնպէս իրաւունք արուեստական քննութեան, որ պէտք է բանար նրանց ճանապարհ պետական պաշտօնների համար, եկեղեցական պաշտօնների վերաբերմամբ կայ առանձին գժուարութիւն, որովհետև Ս. Գրոց մէջ պարզապէս ասած է, որ կինը պէտք է լռէ եկեղեցում

(Կորնթ․ ԺԿ․ 34)։ Այսպիսի փորձերի մէջ մենք կարող ենք տեսնել միայն տգեղութիւն և իրերի բնական կարգի տապալումն, որ պէտք է ինքն իրան ոչընչանայ իւր ոչընչութեամբ։ Միակ գիտութեան կանաւն, ուր կինը կարող է տեղ ունենալ, կարծես, բժշկութեան գիտութիւնն է։ Ամենևին դատապարտելի չէ, որ կանայք իրանց նուիրում են բժշկական արհեստի մի քանի ճիւղերի ուսումնասիրութեան, որպէս զի կարողանան բժշկական օգնութիւն հասցնել իգական սեռի անձնաւորութեանց։ Բայց մենք հարցնում ենք, արդեօք լաւ է և արդարութիւն է նրանց ի շարս այր-բժիշկների դասել հաւասար իրաւունքով և արդեօք նոքա չը պիտի պատաւորուին գործազրեւու իրանց արհեստը միայն որոշեալ սահմաններում և անհայր բժիշկների հակադրութեան ներքոյ, որոնք աւելի ազատ ուսումնական շրջահայեցողութիւն ունին։ Ազատութեան պաշտպանները պահանջում են էլի, որ թողարուի և գատական պաշտօններ փարելու, զօրորինակ որ նոքա կարողանան փաստաբաններ լինեն և գատաւորներ, նայնպէս ունենան իրաւունք ոչ միայն պետական ժողովի անդամներ ընտրելու, այլ և ինքեանք ընտրուին անդամ պետական կամ պատգամաւորաց ժողովի։ Այս դէպքում կնոջ ազատութեան կուսակիցներն ներկայացնում են իրանց այնպիսի կանայի բնութիւն, որ բոլորովին տարբեր է իրականից և առանց ուշադրութեան են թողնում կնոջ ոչ-իրաւաբանական բնութիւնն, որ հակամիտ է աւելի զգացմունքի ենթարկուելու, քան աւարկայական հիմունքներին և անգորր խորհրդածութեանց յարմարութեւ։ Չեն բացատրել նոքա և այն հանգամանքը թէ ինչպէս կրնիմանան գործերն, երբ այդ կանայք—փաստաբանները, գատաւորները, պատգամաւորաց ժողովի անդամները սպասելիս կը լինին իրանց յղիութեան լուծման և կամ երբ ծննդից յետ պառկած են անկողնում։ Բայց իրապէս հօ չէ կարելի ծածկել, որ այս բնական իրողութիւնը գոյութիւն ունին և չէ կարելի նրանց թեթեւութեամբ վերաբերուիլ, կամ նայել նոցա վերայ իբրև ճնշին իրողութեանց վերայ։ Այս դէպքերը կան իրական կեանքի մէջ, որ պարզապէս ցոյց է տալիս, որ կնոջ շրջանն ոչ թէ հասարակական, այլ բնական կեանքն է։ Պետութիւնը չը պէտք է հակասութեան մէջ

սին և միմեանց համար և փոխադարձաբար նպաստեն միմեանց անձնաւորութեան զարգացման. բայց անհնարին է այդ, եթէ նորա իրար շահերին չմասնակցեն: Այլ մարդը պէտք է կարող լինի հասկանալու տանտիկնոջ դիրքն ու շահերն և այսպէս զարգանայ հասկանալ կարողանալու համար մանր գործերն ու անձնաւորութիւնքը: Կինն էլ պէտք է կարողանայ հասկանալ իւր մարդու գրութիւնն և այսպէս իւր կողմից զարգանայ ընդհանուրը ըմբռնելու համար: Նա պէտք է հետաքրքրուի իւր մարդու կոչումով, ուրախանայ նորա գործունէութեամբ և սիրէ նրան: Թո՞ղ մինչև անգամ շատ բան չհասկանայ, թո՞ղ նորա համար անհասանելի լինի իւր մարդու կրթութեան շքեղանք. բայց և այնպէս նա տակաւ առ տակաւ կարող լինի ի վերջոյ հասկանալու նորա գործունէութեան նշանակութիւնը, սորա այն մասն, որ կեանքի համար է: Մի քանի դէպքերում նա կարող է նեցուկ լինել մարդուն, օգնական նորա գործունէութեան մէջ և յաճախ մարդու համար մեծ կշիռ կունենայ խոհեմ կնոջ խորհուրդն, որովհետև սորա սրատես և առողջամիտ խելքն աւելի ուղիղ կնկատէ նպատակը, քան ամենատեսակ պատի պատ խորհրդածութիւնք: Առհասարակ այն գործերից, որոնք հետաքրքրում են և զբաղեցնում մարդուն, չկայ մի գործ, որ չունենար մի կողմ, որ հասկանալի չլինէր կնոջ, իսկ ինչ կվերաբերի բանաստեղծութեան և արհեստին, սրանց կինը բոլորովին կարող է սեպհականել: Այս կենցաղավարութեան մէջ փոխադարձ շահերի համար, կարծիքների անընդհատ հաղորդակցութեան ժամանակ, ուրախութեան և տրտմութեան մէջ, հասարակաց կենսական փորձերի մէջ, անընդհատաբար աճող մտերմութեան մէջ, որով պարզուում են երկուստեք իւրաքանչիւրի առաւելութիւնք և թերութիւնք — այս բոլորի մէջ երկու ամուսինք էլ պէտք է զարգանան միասին, նոցա սէրն էլ աճի, մաքրուի և հասունանայ:

Այս ներդաշնակ միացեալ կեանքի, սիրոյ այս անընդհատ զարգացման մէջ է ամուսնութեան երջանկութիւնը: Յայտնի բան է այս երջանկութեան համար անհրաժեշտ են որոշեալ արտաքին պայմաններ, բայց այս պայմանների շարքում մենք ամենևին չենք դասում հարստութիւնն ու առատութիւնը: Նորա ինքն ըստ ինքեան

երկբայական երջանկութիւն են և մանաւանդ ամուսնական կեանքի սկզբում նոցա հետ անբաժան են գայթակղութիւնք, որոնք խոչընդոտ են յինում սիրոյ զարգացման, եթէ այս գայթակղութիւնք չեն յաղթահարուիլ ամեն միջոցներով: Մենք այստեղ աչքի առաջ ունենք այնպիսի գայթակղութիւնք, որոնք լինում են և հետեանք աղքատութեան, այն է իրերի այնպիսի վիճակն, երբ առն և կնոջ կեանքն չափազանց դարձրած է դէպի դուրսն և կորչում է առօրեայ մանր գործերում ի վնաս ներքին կեանքի զարգացման: Ոչ միայն աղքատներն, այլ և հարուստները շատ դէպքերում գրկուում են ներքին կեանքից հետևեալ հարցերից, որ հեթանոսաց միայն անկ է. «ի՞նչ ուտենք, ի՞նչ խմենք, ի՞նչպիսի զգեստներ հագնենք»: Աղքատներն այս հարցերը տալիս են, որովհետև ամեն բանի մէջ կարօտութիւն են զգում, իսկ հարուստներն այն պատճառով, որ ամեն ինչ առատութեամբ ունին և չգիտեն որն ընտրեն:

Պէտք է յաջողակ և երջանիկ հանգամանք համարել սիրոյ համար, երբ այր և կին իրանց կեանքը սկսում են չափաւոր ու սուղ միջոցներով և ապա աշխատանքով ու խնայողութեամբ կազմում են իրանց համար հաստատուն դիրք, իրանք իրանց սիրոյ համար կանգնում են բնակարան և իրանց առանձնայատկութեանց յարմար արտաքին հանգամանքներ ստեղծում, այս պարագայն մարդուս պատճառում է այնպիսի ուրախութիւն, որպիսին նա զգում է, երբ տեսնում է իւր տնկած ու մեծացրած ծառերն, որովհետև այս դէպքում ամուսինք իրանք են լինում իրանց երջանկութեան ստեղծողն ու կարգադրողը: Ուր ամեն ինչ առաջուց տրուած է և ստացուած ժառանգութեամբ, ուր արտաքին դիրքի համար ցանկալու բան չկայ և ոչ էլ ձգտելու, որովհետև ամեն ինչ առատութեամբ կայ, այնտեղ արտաքին պարագայք ստեղծելու համար մարդիկ զբրկուած են այն ինքնազոյ ուրախութիւնից, որ տեղի է ունենում աւելի սահմանափակ միջոցներում, զուրկ են այն ուրախութիւնից, որ լինում է, երբ նոքա փոքրից և քչից նշանաւոր և շատ բան են ստեղծում: Փոքրիկ համեստ ընտանեկան տօնախմբութիւնք իրանց խաղաղ վսեմութեամբ, փոքրիկ անակնկալ բնծայք, որ միմեանց համար պատրաստում են ամուսինք, որոնք թէև ինքն ըստ ինքեան ան-

նշանք, ստանում են առանձին ներքին նշանակութիւն, որովհետեւ նոքա պտուղ են սեպհական աշխատանքի և սիրոյ զոհ — սոքա աւելի հասնատ վիճակի մէջ առանձին հրճուանք և հրապոյր են պատճառում, որոնք չէ կարելի գտնել այնտեղ, ուր են հարստութիւնն և առատութիւնը, թէգուց այստեղ տիրելիս լինի սէրը: Մարդկային վիճակները բազմազան են և յայտնի բան է, կարող է և՛ հարըստութեան մէջ երջանկութիւն լինել. բայց նոքա, որոնց վիճակուած է ընտանեկան կեանքը հարստութեան և առատութեան մէջ սկսել և որոնք այսու զրկուած են բաւականութիւնից իրանց ընտանեկան կեանքը ինքնուրոյնաբար կազմելու, պէտք է այս զրկանաց փոխարէն վարձատրեն իրանց ուրիշներին երջանկութիւն և ուրախութիւն պատճառելով: Յամենայն դէպս ամուսնացողների մեծամասնութեան մենք չենք ցանկանում ոչ հարստութիւն և ոչ էլ աղքատութիւն, այլ այն կցանկանք, ինչ որ միջինն է այս ծայրահեղութեանց մէջ և որ յայտնի բան է բազմատեսակ է և բազմաստիճան:

Ոչ մի պսակ կատարելապէս ներդաշնակ և երջանիկ չէ: Ամուսնանալից յետ շուտով ամուսիններն իմանում են, որ այս դրախտը միևնոյն ժամանակ և դպրոց է, լի ծանր աշխատանքներով և փորձերով: Արդէն փորձից իմացուում է, որ ընտանեկան կեանքը մի քանի վերաբերութեամբ «խաչ» է, փորձից հասկացուում է թէ ինչ են նշանակում «մարդս իւր հացն իւր երեսի քրտինքով պէտք է ուտի» խօսքերը. այս նախադասութիւնն այն դէպքերում, երբ աշխատանքի նպատակը սնունդ ձեռք բերելը չէ, այս բառի բուն նշանակութեամբ, վերաբերուում է ամեն աշխատանքի, որ իսկապէս բաւականութիւն և կատակ չէ. այլ նա դաշտ է, որ մշակուում է մեծ ջանքով և ճիգով: Փորձից իմացուում է, թէ ինչ է հասկանալու «կինը ցաւերով պէտք է ծնի իւր զաւակները», և թէ «նորա կամքն», որ ի բնէ ինքնասէր է և հակամիտ դէպի ինքնիշխանութիւն և ամբարհաւաճութիւն «պէտք է ենթարկուի» առն: Բացի սրանից ամուսնութեան լուրջ և ծանր նշանակութիւնն երևում է այս կամ այն անակնկալ դէպքերում, զանազան դժգոհութեանց մէջ, կայքի կորստի, հիւանդութեանց և այն տխուր հանգամանաց մէջ, երբ հայրն և մայրը ստիպուած են կանգնելու իրանց սիրելի զաւակաց

մահճի մօտ նոցա մահուան ժամանակ և այլն: Ամուսնութեան լուրջ նշանակութիւնն էլի երևում է նրանում, որ ամուսինք պէտք է աշխատեն և ճիգ թափեն իրանց վերայ, պատերազմելով մեղքի դէմ, առանց որոյ չէ կարող լինել սիրոյ վերոյիշեալ զարգացումն: Ամուսնական կեանքում դադարում են սիրոյ առաջին ցնորքներն, և առաւելութիւնք, որ նոքա վերաբերում էին միմեանց, երբ իրար տեսան վարդազոյն վիճակի մէջ, անցնում են անհետանում. ընդհակառակն Հանդէս են գալիս և յայտնուում բազմաթիւ թերութիւնք, առանձնայատկութիւնք և միակողմանիութիւնք:

Ամենից առաջ պէտք է ոչնչացնել այն ամենն, ինչ որ որևէ կերպով խանգարում է փոխադարձ հաւատարմութիւնն, երբ ամուսիններից մէկը նկատում է իւր մէջ այսպիսի ինչ. այսպիսեաց շարքում համարելի են փոխադարձ անտարբերութեան յայտնութիւնը, սառնութիւնն և ծածուկ բնաւորութիւնը: Վերջինը նշան է սիրոյ նուազման, սիրոյ, որոյ էութիւնը պարզամիտ մտերմութեան մէջ է: Մանաւանդ իւրաքանչիւրը պիտի աշխատէ իւր միջից արմատախիլ անել այն թերութիւնքն, որոնք միւսի համար գայթակղութեան քար են և անում են մեզ անարժան սիրոյ այն մարդու աչքում, որ միացած է մեզ հետ սիրով: Բայց այս դէպքում երկու ամուսինք էլ պէտք է բառնան միմեանց բեռը, և սորա համար իւրաքանչիւրը պէտք է համբերութեամբ տանէ միւսի թերութեանց և թուլութեանց, սիրով ներէ նրանց և բարեկամաբար նպաստէ նրանց ջնջելու: Այս ընդհանուր բեռներին ի միջի այլոց վերաբերելի են նոյն պակասութիւնք, որոց աղբիւրն է իւրաքանչիւր ամուսնոյ բնաւորութեան առանձին կազմուածքն ու խառնուածքը: Յոյժ ցանկալի է, որ ամուսինների բնութեան խառնուածքները տարբեր լինին, որովհետև և այս դէպքում նոքա հեշտութեամբ կարող են միմեանց օգնել քան երբ երկուսն էլ մի խառնուածքի են, զորօրինակ եթէ նոքա երկուսն էլ մեղամաղձային են կամ դիւրագրգիռ: Մէկի բարկացկոտութեան դէմ միւսի հեղութիւնն ու լուութիւնը, միացած բարեկամութեան հետ, ամենընտիր անդորրացուցիչ միջոցն է:

Ամուսնական կեանքն խախտող Հանգամանքներին վերաբերելի են նոյնպէս երկպառակութիւնք կամ անհամաձայնութիւնք, որոնք ծա-

գում են չնչին դէպքերից: Նատերը զանազան եղանակով նկարած են այն իրողութիւնն, որ որեւէ կին կարող է մեծ համբերութիւն, անձնուրացութիւն և ոգւոյ ներկայութիւն ցոյց տալ ընտանեկան ծանր հանգամանքներում: զորօրինակ հիւանդութեան ժամանակ, երբ նա գիշեր ու ցերեկ իրան նուիրում է ծառայութեան իւր հիւանդ մարդու կամ զաւակաց, բայց առօրեայ կենցաղավարութեան մէջ նա կորցնում է իւր ծանրութիւնն և համբերութիւնն, երբ զորօրինակ ծառայն, որից առհասարակ գոհ է, անկարգ է երեւում կամ երբ զանգն սովորականից աւելի գորեղ է հնչում, կամ սփռոցի վերայ արատ է երևում և կամ ոք կեղտոտում է սենեակի մաքուր գորգը: Աննշան անհամաձայնութիւնք, չնչին վէճերը մանր մունր բաների համար կարող են նշանաւոր երկպառակութեանց առիթ տալ: Սրանից ազատ մնալու համար պէտք է կանոն անել, որ հարկ չէ անուշադիր թողնել մանր բաներն, որոնք յայտնի բան է ունին իրանց նշանակութիւնն և որոց շատերը վերաբերում են ամուսնական կեանքի գեղեցկագիտական կողմին: Այս հանգամանքի վերայ ուշադրութիւն պիտի դարձնեն մանաւանդ այր մարդիկ: Բայց միւս կողմանէ մանր բաների վերայ պէտք է նայել, իբրև այդպիսեաց վերայ, այսինքն իբրև աննշան ու փոքր բաների վերայ, որոնց հարկ չէ առաջին կարգի կարևորութիւն տալ, այնպիսի հանգամանքների համար հարկ չէ վրդովիլ և բարկանալ, — որ նոյնպէս գեղեցիկ չէ: Այս կանոնը պէտք է յիշեն մանաւանդ կանայք: Բարեմտութեամբ արած վէճը, ներքնապէս իրան մանր անհամաձայնութիւնից բարձր պահելն, ազատ և լուրջ զգացմունքն, որ հեշտութեամբ ցրում է այնպիսի մանր ամպերը, կարող են այսպիսի հանգամանքներում շատ արդիւնաւոր ազդեցութիւն գործել:

Բայց իսկական առաւելութիւնն այդպիսի գայթակղութեանց ժամանակ, իսկական գորութիւնը թէ մեծ և թէ մանր անբաւականութեանց տանելու և սէրն ամրապնդելու համար, որ Աստուծոյ հաճոյ է և մարդոց սիրելի, գոյանում է քրիստոնէական հաւատի մէջ: Աշխատանքն, որոյ օգնութեամբ ամուսինք միմեանց կրթել և բարձրացնել են ճգնում, պէտք է լինի իւր հիմամբ աշխատանք փոխադարձ լուսաւորութեան համար, որպէս զի նոքա կարողանան

միասին և մէկը միւսի միջնորդութեամբ Հասունանալ Աստուծոյ արքայութեան Համար: Քրիստոնէական Հաւատն ուսուցանում է ամուսիններին նայել միմեանց վերայ իբրև արարածների վերայ որոնք նշանակած չեն միայն երկրաւոր կեանքի Համար, այլ և նորա Համար, որ ապագայում յառնեն ի մեռելոց իբրև ժառանգակիցք շնորհացն կենաց (Առ. Պետ. Գ. 7):

(Կը շարունակուի):

ԵԿԵՂԵՅԻՈՅ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱՐՔ

(ՖԱՐՐԵՐԻ ՆՈՐ ՀԱՐԳՐՈՒԹԻՒՆԻՑ)

II. ՍՈՒՐԻ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՄԵՇՆ ԲԱՐՍԵՂ

Գրիգորը վերջացրել էր իւր ուսումը: Նա կեսարիայում սովորել էր Զարտասանութիւն, Աղէքսանդրիայում սակաւ ինչ ծանօթացել էր պղատօնական փիլիսոփայութեանը: Խորին յարգանքք անձնատուր եղաւ Աթանասին և նիկիական աստուածաբանութեանը և հոգեզմայլութեամբ անձնատուր էր Որոգինէսին և նորա՝ սուրբ գրքի մեկնութեանն ու խորհրդածութեան ձևին: Աթէնքը, ուր նա տասն տարու չափ ապրել էր, նորա վերայ աւելի ևս խոր տպաւորութիւն էր թողել: Նորա ծանօթութիւնը Բարսեղի հետ՝ այնտեղ անձնանուէր բարեկամութեան հասաւ. իսկ Յուլիանոսի հետ ծանօթութիւնը՝ վերին աստիճանի զգուանքի: Նա հին դասական Յունաստանի գրականութեանն ու փիլիսոփայութեանը հիմնաւորապէս ծանօթացաւ, և բոլորովին հմտացաւ նոյն ժամանակի նորաձեւութիւն դարձած հռետորութեանն ու հակաճառութեանը: Մի և նոյն ժամանակ հեթանոսական պատրող հրապոյրների դէմ անդրդուելի մնաց և քրիստոնեայ կոչումն աւելի ու աւելի հիմնաւոր նպատակ դարձաւ նորա կեանքի համար: